

ՀՀ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՄՈՏ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-ԻՆ ԺԱՄԸ 13:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐ-ՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ, Մ-6, ՎԱՆԱՁՈՐ-ԱԼԱՎԵՐԴԻ-ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈՄՈՒԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ (ԿՄ 38+450 ԿՄ 90 + 191 ՀԱՏՎԱԾ) ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ, ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

- | | |
|-----------------|--|
| Գ. Սանոսյան | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար |
| Հ. Սիմիդյան | ՀՀ շրջակա միջավայրի նախարար |
| Վ. Քերոբյան | ՀՀ էկոնոմիկայի նախարար |
| Կ. Անդրեասյան | ՀՀ արդարադատության նախարար |
| Ս. Թովմասյան | ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար |
| Լ. Հովհաննիսյան | Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ |
| Բ. Բադալյան | ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ |
| Ք. Ղալեչյան | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ |
| Ա. Ավանեսյան | ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ |
| Վ. Դավթյան | ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանի գրասենյակի ղեկավար |
| Ն. Պետրոսյան | ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանի խորհրդական |
| Ա. Մանուկյան | ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի խորհրդական |

Լ. Մարտիրոսյան	ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանի մամուլի քարտուղար
Փ. Դարբինյան	ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանի ռեֆերենտ
Գ. Ավետիսյան	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն
Ն. Զուլալյան	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ծրագրերի կառավարման և գնումների դեպարտամենտի պետ
Հ. Օրդուխանյան	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գնումների բաժնի պետ

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 4, Սիսիան-Քաջարան կմ 0+000-կմ 60+022 հատվածի նախնական գնումների պլանի, շինարարական աշխատանքների իրականացման մրցույթի նախատրակավորման փուլի մրցութային փաստաթղթերի հաստատման և մրցույթի գնահատող հանձնաժողովի ձևավորման վերաբերյալ

(Քրիստինե Ղալեչյան, Համբարձում Մաթևոսյան)

1. Հաստատել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 4, Սիսիան-Քաջարան կմ 0+000-կմ 60+022 հատվածի նախնական գնումների պլանը, շինարարական աշխատանքների իրականացման մրցույթի նախատրակավորման փուլի մրցութային փաստաթղթերը՝ պայմանով, որ 2-օրյա ժամկետում ՀՀ ֆինանսների նախարար Տիգրան Խաչատրյանի հետ լրացուցիչ կճշգրտվեն նախատրակավորման փուլի մրցութային փաստաթղթերը:

2. Հաստատել Սիսիան-Քաջարան կմ 0+000-կմ 60+022 ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցութային գործընթացի գնահատող հանձնաժողովի կազմը:

3. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանին՝

1) համագործակցելով ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանի մամուլի քարտուղարի, ՀՀ արտաքին գործերի նախարարության, ՀՀ էկոնոմիկայի նախարարության, «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի, «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի («Էնթերփրայզ Արմենիա») և միջազգային դոնոր կազմակերպությունների հետ՝ ապահովել միջազգային հարթակներում Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման շրջանակներում շինարարական աշխատանքների գծով հայտարարվող մրցույթների լայնորեն իրազեկումը՝ առավելագույնս մասնակցության հայտեր ստանալու և ընտրության լայն հնարավորություն ունենալու համար.

2) ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Բագրատ Բադալյանի առաջարկությամբ՝

ա. քննարկել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 4, Սիսիան-Քաջարան կմ 0+000-կմ 60+022 հատվածի շինարարական աշխատանքների իրականացման մրցութային գործընթացը փուլային եղանակով իրականացնելու հնարավորության հարցը, որտեղ՝

- առաջին փուլով նախատեսել 8.6 կմ երկարությամբ Բարգուշատի թունելի կառուցումը,

- 2-րդ փուլով նախատեսել նախորդ փուլի աշխատանքների կատարողականի հիման վրա, ևս փուլային եղանակով, շինարարական աշխատանքների կատարման հնարավորության ընձեռում,

- մրցութային պայմաններում ներառել նաև նախագծով սահմանված ժամկետից շուտ շինարարական աշխատանքների ավարտի դեպքում խրախուսման մեխանիզմ կիրառելու պայմանը,

բ. մշակել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման (առաջադրանքների նախապատրաստում, խորհրդատուների ընտրություն, տեխնիկական հսկողության ծառայության ձեռքբերում, տարածքների օտարում և այլն) իրատեսական պլան-ժամանակացույց և այն ներկայացնել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի կառավարման խորհրդին: Ընդ որում, պլան-ժամանակացույցում ներառել առանձին սյունակ, որտեղ յուրաքանչյուր

գործողության համար կներկայացվեն աշխատանքների կատարման իրատեսականության հիմնավորումները.

3) ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանի առաջարկությամբ՝

ա. վերանայել մրցույթի անցկացման համար նախատեսված ժամկետը՝ 50 օրվա փոխարեն սահմանելով 70 օր և նախատեսել հետագայում, ըստ անհրաժեշտության, ժամկետի երկարաձգման հնարավորություն,

բ. Սիսիան-Քաջարան կմ 0+000-կմ 60+022 ծրագրի գնումների նախնական պլանի հիմնական ցուցանիշների հիմքում դնել ժամականահատվածի և նախատեսվող շինարարական աշխատանքների արժեքի տնտեսական ազդեցության գործոնը.

4) ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյանի առաջարկությամբ՝

ա. ՀՀ կադաստրի կոմիտե նախօրոք ներկայացնել փաստացի օգտագործվող հողերի և օբյեկտների մակերեսների վերաբերյալ հստակ տեղեկատվություն՝ կադաստրային քարտեզների համակարգում ուղղումներ կատարելիս որպես ուղենիշ հիմք ընդունելու համար,

բ. ՀՀ կադաստրի կոմիտե ներկայացնել փաստացի օգտագործվող գյուղատնտեսական հողատարածքների (այդ թվում՝ ինքնակամ կառույցների մակերեսներ, կոորդինատներ), այդ գույքերի սեփականության իրավունքի պետական գրանցման տվյալների և դրանց փաստացի օգտագործման միջև առկա անհամապատասխանությունների հետ կապված խնդրի կարգավորման վերաբերյալ առաջարկություններ.

5) ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյանի առաջարկությամբ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 4, Սիսիան-Քաջարան կմ 0+000-կմ 60+022 հատվածի շինարարական աշխատանքների իրականացման մրցույթի նախատրակավորման գործընթացը փուլային եղանակով իրականացնելու մասին տեղեկատվությունը ներառել մրցութային փաթեթներում՝ մրցույթի մասնակիցների համար ապահովելով լիարժեք տեղեկացվածություն.

6) ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանի դիտարկմանը համապատասխան՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 4, Սիսիան-Քաջարան կմ 0+000-կմ 60+022 ճանապարհի կառուցման ծրագրի շրջանակներում իրար հետ չփոխկապակցված, սակայն ժամկետային առումով առավել

ուչ նախատեսված աշխատանքները մեկնարկել ժամանակացույցով ընթացքի մեջ գտնվող մնացյալ աշխատանքներին զուգահեռ:

4. ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյանին՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման գործընթացում սերտորեն համագործակցել և, ցուցաբերելով առավելագույնս ճկունություն, աջակցել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ